Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի Մարզ
Գրիբոյեդովի Գյուղապետարան

Республика Армения
Армавирский Марз
Муниципалитет Села Грибоедова

N 40
04 04 2014թ

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզիԳրիբոյեդով համայնքի ղեկավարի 2014 թվականի մարտ ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 7 թերթ:

Գրիբոյեդով
համայնքի ղեկավար Վ. Գրիգորյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԳՐԻԲՈԵԴՈՎԻ ... 04703745

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 1/257/4151-14
04 04 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 24 » մարտի 2014թ N 2-Ա

## ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Գրիբոյեդով համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 29-ի N56-Ն որոշումը

**որոշում եմ**

1. Գրիբոյեդով համայնքի սեփականություն հանդիսացող 37.25 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողերը մրցութային կարգով տրամադրել վարձակալության:

2. Յուրաքանչյուր 1.0 հա հողամասի վարձակալության տրամադրման մեկնարկային գին սահմանել՝

| | |
|---|---|
| 1) 3-րդ կարգի վարելահողերի համար | 18500 ՀՀ դրամ |
| 2) 4-րդ կարգի վարելահողերի համար | 12500 ՀՀ դրամ: |
| Մրցույթի մեկնարկային քայլը՝ | 1000 ՀՀ դրամ |

3. Հողամասերի վարձակալության մրցույթը իրականացնել գյուղապետարանի մրցութային հանձնաժողովի միջոցով:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2014 թվականի մարտի 24
գ. Գրիբոյեդով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 24 » մարտի 2014թ** **N 3-Ա**

## ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 49-րդ կետով, հիմք ընդունելով Գրիբոյեդով համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 29-ի N56-Ն որոշումը

**որոշում եմ**

1. Ստեղծել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությամբ տրամադրման մրցութային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ / Վ. Գրիգորյան /, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և այլ նորմատիվ ակտերով սահմանված կարգով իրականացնել համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 29-ի N56-Ն որոշման իրականացման համար անհրաժեշտ գործառույթները:

3. Հանձնաժողովին / Վ. Գրիգորյան /՝սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային տեսչության պետ Արմեն Դարբինյանին, համայնքի ավագանու անդամներ՝ Գագիկ Թեմուրյանին և Աշոտ Արզումանյանին /համաձայնությամբ /:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2014 թվականի մարտի 24
գ. Գրիբոյեդով

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդովի
գյուղական համայնքի ղեկավարի
2014 թվականի մարտի 24-ի
N 3-Ա որոշման

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝
Վ. Գրիգորյան — համայնքի ղեկավար

Անդամներ՝
Ս. Գևորգյան — համայնքի ղեկավարի տեղակալ

Ս. Գրիգորյան — աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Քնշիշ-Ղուկասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

« 3 » մարտի 2014թ N 1 - Ա

## ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Յայաստանի Յանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով՝մարտի 8-ի կապակցությամբ միջոցառումների կազմակերպման և նվերներ գնելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Յանձնաժողովին / Ս. Գևորգյան / `սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3. Յանձնաժողովին / Ս. Գևորգյան /`սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել համայնքի ավագանու անդամներ՝ Յրայր Միզախանյանին և Գևորգ Գրիգորյանին /համաձայնությամբ /:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՅԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2014 թվականի մարտի 3
գ. Գրիբոյեդով

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդով
գյուղական համայնքի ղեկավարի
2014 թվականի մարտի 3-ի
N 1-Ա կարգադրության

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝
Ս. Գևորգյան — համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝
Դ. Շուշանյան — աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Դ. Դավթյան — աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Քեշիշ-Ղուկասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

« 3 » մարտի 2014թ N 2 - Ա

## ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Յայաստանի Յանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով՝համայնքում սգո արարողությունների համար ծաղկեպսակների ձեռք բերման նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Յանձնաժողովին / Ս. Գևորգյան / `սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3. Յանձնաժողովին / Ս. Գևորգյան /`սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել համայնքի ավագանու անդամ `Արտակ Յաղուբյանին / համաձայնությամբ/:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՅԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2014 թվականի մարտի 3
գ. Գրիբոյեդով

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդով
գյուղական համայնքի ղեկավարի
2014 թվականի մարտի 3-ի
N 2-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝
Ս. Գևորգյան — համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝
Ս. Գրիգորյան — աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Դ. Դավթյան — աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Աշխատակազմի քարտուղար — Ա. Քեշիշ-Ղուկասյան